

[Faint handwritten mark]

616.9
tu-23

07 MAY 2013

Օ.Ն.Ծ
85-Մ

616-9
Խ-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
№ 15

**ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ
ԻՆՓՐՈՒԷՆՑԱ**
«ԻՍԿԱՆԿԱ»



Թ Ի Ֆ Լ Ի Ս
պ տպարան Թաուճկոնի
1918 թ.

616
Խ-29

2489

615
10-29
61
Խաչ

911

6942




36986-62

Համաճարակային ինֆլուէնցա

Բաւական չէր համաչխարհային կործանարար պատերազմը, բաւական չէին տիֆիզանագան տեսակները, խօլերան և այլ տարափոխիկ հիւանդութիւնները, վերջերս էլ համաճարակային ինֆլուէնցան բռնկուելով տարածուեց համարեա ողջ եւրոպայում և անողոր կերպով քայքայում է առանց այն էլ ուժասպառ եղած մարդկութեանը:

Ինչպէս ամեն ժամանակ, երբ յանկարծակի երևան է գալիս մի ախտ, ժողովրդի որոշ խաւեր այդ բանը կապում են ճակատագրի կամ աստուածային պատուհասի հետ, այս համաճարակի՝ ինֆլուէնցայի աւթիւ էլ լինում են զանազան ատեկօսէներ, վերին աստիճանի տարօրինակ մեկնաբանութիւններով: Ներկայ գրքոյկիս նպատակն է ծանօթացնել ընթերցող հասարակութեանն այս համաճարակի հետ, ինչպէս մի որոշ յայտնի խիստ տարափոխիկ հիւանդութեան հետ: Գծբախտաբար ոչ ժամանակն և ոչ էլ տպագրական տակնապը թոյլ չեն տալիս ինձ նրկարկել այս նիւթի շուրջը տալով և մանրամասն նկարագրութիւններ առանձին որոշ հետաքրքրա-



կան դէպքերի նկատմամբ, ուստի և ես կաշխատեմ կարճ կերպով անցնել դրքոյկիս բուն նիւթին:

Այս ցաւը, որ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ համաճարակային բնոյթ կրող սովորական վարակիչ ինֆուէնցան, վարուց է որ շէր երեւում ինչպէս համաճարակ: Վերջին անգամ իբրև համաճարակ այս հիւանդութիւնն երևաց 1889 թուին, որին ենթարկուեց երկրագնդի բնակչութեան համարեա $\frac{1}{3}$ -դ մասը՝ 500 միլիոն մարդ. միմիայն Պրանսիան ըստ վիճակագրական տեղեկութիւնների, 4 $\frac{1}{2}$ հազար զո՛ւ է տուած: Նման համաճարակային ինֆուէնցա եղել է 1847-48 թուականներին, իսկ դիտութեան մէջ յիշուած է ինչպէս սոսկալի էպիդէմիա 1510 թուից. այնպէս որ այս հիւանդութիւնն ոչ թէ նոր ցաւ է, ինչպէս նրան կոչել էին անցեալ դարում տեղի ունեցած էպիդէմիաների ժամանակ, այլ տակի հին ծագումն ունի, հետևապէս և անհիմն է անուանել այս հիւանդութիւնը թոքերի ժանտախա, սպանական հիւանդութիւն և այլն....

Ներկայիս համաճարակը գուցէ աւելի մեծ կերպարանք է ստացել քան նախկին համաճարակները, միայն հազորգակցութեան բացակայութեան պատճառով մենք չունինք տեղեկութիւններ ամեն կողմից, ըստ լուրերի Շվեյցեայում այնքան խիտ է համաճարակը, որ մի ամսում 6000 մահուան դէպք է եղած. Սիւմ

ֆերոպօլում կարճ ժամանակում հիւանդացել են 10,000, իսկ Մոսկվայում 60,000:

Սակայն պէտք է ասել որ շատ յաճախ ուրիշ հիւանդութիւններ, որ ոչ մի կապ չունեն ինֆուէնցայի հետ անուանում են կպանական ախտ և կամ համաճարակային ինֆուէնցայի բարդութիւն:

ինչպէս գիտէք բոլոր, վարակիչ հիւանդութիւններն ունին իրենց որոշ դրդապատճառները՝ թոյնը, որին մենք ընդհանուր անամբ մանրէ (բակտերիա) անուան ենք տալիս:

Այս ինֆուէնցային մանրէներն ունին փոքրիկ ձողիկների ձև, որ նկատելի են միայն խոշորացոյցի միջոցով, և որպիսիք առատութեամբ գտնուում են հիւանդի խորխի մէջ, որտեղից էլ անցնում են ինչպէս հիւանդի շուրջը գտնուող իրերին, այնպէս էլ առատութեամբ տարածուում են օդի մէջ, երբ հիւանդը հազում է և խորխի կամ թուքի մասնիկներն ընկնում են օդի մէջ, և վարակման գլխաւոր աղբիւրն հանդիսանում:

Մարդիկ սովորաբար վարակուած են շրջառութեան ժամանակ քթի լորձնաթաղանթի միջոցով, ուր առաջին անգամ տեղի է ունենում եւրօպական այս անկոչ հիւրի՛ ինֆուէնցայի մանրէների բազմացումն և որտեղից թոյնն անցնելով մեր մարմնին՝ կարճ ժամանակում առաջ է բերում հիւանդութեան նշանները:

Հիւանդութեան ախտանիշներն հետեւեալներն են. գլխի սաստիկ ցաւ, ողնրի յօգերի, ողնաշարի և մանաւանդ մէջքի ներքին և դաւակի ողների ցաւ, այնպէս որ հիւանդը զըժուարութեամբ է նստում անկողնի մէջ. այս տեսակէտից-ողնաշարի ցաւի՝ հիւանդը թողնում է անդլ ազարձ տիֆով բռնուածի տպաւորութիւն: Տաքութիւնն հասնում է 39,5—40° և աւելի բարձր: միաժամանակ լինում է երբեմն հարբուխ, սրտի խառնումն, փսխումն և մանաւանդ հազ: Հիւանդի բերանը չորանում է, լեզուն երբեմն ծածկւում է փառով: Չատ հիւանդներ այդ ժամանակ սարսափելի անհանգիստ են դառնում, ամբողջ ժամանակ անկողնի մէջ այս ու այն կողմը շուռ գալիս, զառանցանքի մէջ ընկնում. յաճախ պատահում է կապութիւն, արիւնմիգութիւն և այլն: Հիւանդների մեծ մասը զանգատում է կոկորդի թեթև ցաւից, մանաւանդ հիւանդութեան առաջին օրերին. տաքութեան ընթացքում հիւանդները տանջւում են նոյնպէս անքնութեամբ:

Սովորաբար տաքութիւնը տևում է 3-4 օր, երբեմն 7-8 օր կամ նոյն իսկ էլ աւելի երկար ժամանակ, որից յետոյ տաքութիւնն իջնում է. դրա հետ միասին աստիճանաբար անհետանում են և մնացած ախտանիշերը: այն ինչ՝ ընդհանուր թուլութիւնը դեռ երկար ժամանակ մնում է:

Պէտք է ստել, որ չնայած հիւանդութիւնը բարեյաջող դէպքերում շատ կարճ ժամանակ տևելով անցնում է, բայց և այնպէս հիւանդութեան թոյնը այնքան խիստ է, որ երբեմն ամենաուժեղ կազմուածքի տէր հիւանդն անգամ մի քանի օրուայ ընթացքում խիստ թուլութեան մէջ է ընկնում:

Վերը նկարագրածս դէպքերը վերաբերւում են բարեյաջող դէպքերին, երբ հիւանդութիւնն անցնում է առանց բարդութիւնների. սակայն բոլորովին այլ պատկեր է ստացւում բարդութիւնների ժամանակ, առանձնապէս ինկատի առնելու է թոքերի բորբոքումը, որին էլ սովորաբար հիւանդութիւնը բաւական զոհեր է սալիս:

Թոքերի բորբոքումը սովորաբար լինում է մի թոքի որոշ մասում, որտեղից էլ երբեմն անցնում է, սողալով տարածւում ամբողջ թոքին, և կամ նոյն իսկ երկու թոքն էլ բռնւում են բորբոքմամբ, որը և շատ վտանգաւոր է:

Թոքերի բորբոքումը շատ յաճախ վրայ է հասնում այն ժամանակ երբ ինֆլուէնցեայի տաքութիւնն իջնում է, և որից անմիջապէս

յետոյ տաքութիւնն կրկին բարձրանում է, հիւանդը բորբոքուած մատում ցաւ է զգում, սաստիկ հազում է երբեմն արիւնախառն խորխ [թքելով]:

Առանձնապէս դժուար է լինում թորերի բորբոքումն այն էլ այն մարդկանց, որոնք առաջուց թորքերի հիւանդութիւն են ունեցել կամ թոյլ կադմուածք ունին, նոր ծանր հիւանդութիւնից վեր են կացել, կամ ծեր լինելով ընհանրապէս թուլ են և կամ վերջապէս սըրտի թուլութիւն ունին:

Երբեմն էլ հիւանդութեան գոհուում են ծաղիկ հասակի մէջ գտնւող երիզասարտները որոնք ըստ երևոյթին պէտք է որ առողջ լինէին, սակայն յանկարծ հիւանդութեան գոհ են գնում: Այսպիսի դէպքերում բացի զանազան զանցառութիւններին և հիւանդութեան անուշագիր լինելուց, պէտք է ի նկատի առնել և այն հանգամանքն որ շատ յաճախ այդ առողջ կարծեցեալ երիզասարտները թորքերի հիւանդութիւն են ունենում ծածկուած կերպով, որի մասին ոչ իրենք և ոչ էլ իրենց շըրջապատողները չեն կասկածում:

Բացի թորերի բորբոքումից՝ հիւանդու-

թիւնը կարող է բուն գնել և մարտդութեան գործարանների մէջ, ուր և գրգռելով բորբոքում է և տալիս ինֆլուէնցային աղիբային բնոյթ: Երբեմն էլ հիւանդութիւնն անցնում է երեկամունքներին (НОУКН) և կամ նեարդային համակարգութեան. ուրիշ դէպքում քթի և բերանի խոռոչից հիւանդութիւնն անցնում է միջականջին, մանուանդ երեխաների մօտ, և առաջ բերում այդտեղ սարսափելի ցաւ, ահանջի խշխշոց, որից ահանջը ծանրանում է և հիւանդն այդ ահանջով դժուար է լսում:

Բացի այս բարդութիւններից և վերե յիշածս ախտանիշներից, էլ ուրիշ ախտանիշներ են լինում առանձին հիւանդների մօտ. այսպէս օրինակ ես նկատած եմ մարմնի այս կամ այն յօդի առանձնապէս խիստ ցաւ և մի քանի դէպքերում այդ յօդերի վրայ նկատելի է եղած պալարաձև փոքրիկ ուռոյցք, որը սղմելուց սարսափելի ցաւ է պատճառում: Ուրիշ դէպքերում նկատուած է արիւնհոսութիւն ըթից, բերանից, աղիքներից և այլն....

Բարդութիւնների մասին շնրկարացնելով խօսքս անցնենք նախազգուշական և բուժման միջոցներին:

Իբրև նախագրուչական միջոցներ մենք պէտք է յիշենք այն բոլոր առողջապահական պահանջները, որ գործադրուում են այլ վարակիչ հիւանդութիւնների ժամանակ. այսպէս օրինակ ըստ հնարաւորութեան հիւանդին առանձնացնել, թոյլ չտալ հիւանդի սնննակը դնալու մանաւանդ թոյլ թորեր և ընդհանրապէս թոյլ կազմուածք ունեցողներին, խոյս տալ հիւանդի խորխից, քանի որ, ինչպէս ասացինք, ինֆլուէնցայի մանրէները՝ թոյնը առատութեամբ գանուում է խօրխի մէջ, այդ պատճառով էլ անհրաժեշտ է հիւանդի թքամանը լըցնել որևէ ակտաճանիչ միջոցով (օրին. կարբօլեան թթւուտի լուծուածքով), հիւանդի կեդտոտ հագուստը, սաւանները, թաշկինակները առանձին փակ տեղ պահել և լուանալուց առաջ ելի տալ: Պէտք է ի՛ նկատի առնել, որ տաք (60°) ջրի մէջ ինֆլուէնցիայի մանրէները շուտով կորցնում են իրենց կենսունակութիւնը: Իսկ ինչ վերաբերում է հակաինֆլուէնցիական շիջուկին, որի մասին շատերն ասում են, որ եւրոպայում գործ է ածուում և որ գերմանական զինւորական բժշկիկները ունին նոյն իսկ այստեղ իրենց զօրքի համար, դա

սխալ է. մենք դիմումներ արինք այստեղէ բժիշկներից մէկին այդ շիջուկի համար և ստացանք բացասական պատասխան. նորա նոյնքան անզօր են հիւանդութեան առաջն առնելու շիջուկներով, որքան և մենք. թէպէտ Ուկրայնայից եկողները դարձեալ պնդում են գոյութիւն ունեցող շիջուկի մասին: Ուրեմն իբրև նախագրուչական միջոց՝ ամենից առաջ ի նկատի առնելու է մաքրութիւնն, ու ակտահանութիւնը:

Պէտք է յիշել, որ լաւ սնունդ առնելն էլ մեծ նշանակութիւն ունի. լաւ սննդուած ուժեղ օրգանիզմը, շատ աւելի քիչ է ենթարկուում վարակման և վարակուելուց էլ աւելի շուտ է առողջանում. և հէնց, մեր կարծիքով, մահացութեան մեծ տոկոս լինելը պէտք է վերագրել և այն բանին, որ ներկայիս մի կողմից պատերազմի շնորհիւ առաջ եկած պարենաւորման կրիզիսի և միւս կողմից էլ մեր սպէկուլեանանների անկուշտ ակորթակների շնորհիւ մենք զրկուած ենք որոշ սննդատու նիւթերից, որից և մեր օրգանիզմը խրոնիքական բաղքի մէջ է, հետևապէս և թուլացած, որի պատճառով էլ չի կարողանում դիմանալ հիւանդութեան բայքայիչ ոյժին:

Գրանալով բուժման միջոցներին՝ պէտք է ասեմ, որ մենք չունենք որոշ յատուկ միջոց ինֆուէնցիայի դէմ կուռելու համար, այլ մենք մեր ձեռքի տակ ունեցած միջոցներով կարողանում ենք թուլացնել հիւանդութեան այս կամ այն ախտանիշը:

Պէտք է ասել, որ ինչպէս մեր, նոյնպէս և այլ բժիշկների փորձերը ցոյց են տալիս, որ հիւանդութիւնը սկսուելուց անմիջապէս շատ լաւ է ազդում քրտնացնելը, որը բաւական թուլացնում է հիւանդութեան ընթացքը: Սակայն մենք պատահած ենք և քրտնացնելու ի շարք գործադրելը. այսպէս օրինակ մի քանի դէպքերում հիւանդին տրուած է մի բանի անգամ առատութեամբ ասպիրին և խինին, որը հիւանդների սիրտը բաւական թուլանում է և կարող է վտանգաւոր լինել: Քրտնացնելու համար ամենալաւ միջոցներն է մալինայի թէյը, տաք ջրի շիշեր և բժշկի թոյլառութեամբ ասպիրին կամ այլ միջոց. իսկ եթէ հիւանդներն առանց բժշկի ասպիրին են ընդունում, պէտք է գործածեն շատ փոքր քանակութեամբ (ոչ աւել քան կէս զրամ): Շատերն էլ ի նկատի առնելով այն հանկամանքը, որ

հիւանդութիւնն յաճախ սկսում է ջերմով, առանց բժշկի խորհրդին հիւանդին կերակրում են խինինով, որ դարձեալ անտեղի է:

Բացի քրտնացնելուց պէտք է հետեւել, որ հիւանդը կապութիւն չունենայ, հակառակ դէպքում պէտք է կլիզմա անել և տալ լուծողական:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ թորերի բորբոքումն առաջ է գալիս գլխաւորապէս խորխի երկար ժամանակ թորերի մէջ մնալուց այդ պատճառով էլ անհրաժեշտ է բժշկի քննութիւնը և հարկաւոր դէպքում առանց յապաղելու խորխ առաջ բերող դեղերի նշանակելը: Այս բանին՝ խորխի փափկացման և չոր հողի կակղացման, ինչպէս և յօդերի ցաւի թուլացման համար լաւ է ազդում փրանսիական սկիպիլարի (ФРАНЦ. СКИПИЛАРЪ բենկին իւղ), կաֆուրի իւղ (камфорн. масло) և բանգի իւղի (Съленое масло-Ол. Нюсеуами) խառնուրդից կազմուած հեղուկը որը պէտք է քսել ինչպէս ցաւոյ յօդերին, նոյնպէս և մէջքը, կողերը և կուրծքը:

Հիւանդին պէտք է տեղափոխել լուսաւոր և մեծ սենեակ, որի օդը յաճախակի պէտք է թարմացնել բաց անելով պատուհանները, բայց զգուշութեամբ, որ հիւանդին չմրսացնել.

Մննուողը պէտք է լինի հեշտամարտ և աննդալից ուստի իրենցից՝ կաթ, մածուն, բուլիօն, ձուի զեղնուցը շաքարի հետ խառնած

(գօգօլ մօգօլ) կաթի հետ միասին, կիսել.....
 Եթե հիւանդի սրտը խառնում է ուտե-
 լիքը պէտք է տալ սաւը դրութեամբ և քիչ
 քիչ՝ գտալներով և ոչ մի անգամից. խլատ հա-
 ղի ժամանակ սառը կերակուրներ չպէտք է
 տալ:

Սովորական կերակուրները կարելի է
 տալ տաքութիւնն անցնելուց 3 օր յետոյ,
 եթէ հիւանդի դրութիւնը ծանր է
 կամ հիւանդը թոյլ օրգանիզմ ունի, անհրա-
 ժեշտ է դիմել բժշկի և նրա խորհրդներով
 առաջնորդուել: Ընդհանրապէս, ի նկատի առ-
 նելով այն հանգամանքը, որ հիւանդութիւնը
 շատ յաճախ բարդ կերպարանք է ստանում,
 լաւ կըլինէր հէնց սկզբից խորհրդակցել բը-
 ժշկի հետ. իսկ այն դէպքերում, երբ հիւանդի
 շնչառութիւնը խանգարուած է, հազը խստա-
 նում, անմիջապէս պէտք է դիմել բժշկի օգ-
 նութեան: Շատ ցաւալի է, որ մեր քաղաքա-
 յին վարչութիւնները հոգ չեն տանում և այդ-
 պիսի էպիդէմիաների ժամանակ չեն ուժեղաց-
 ւելում քաղաքային բժշկական կայաններ
 (անհրաժեշտ թռուցիկ բժշկական կայաններ
 միջոց-
 (անհրաժեշտ գեղերով և ակտառանիչ միջոց-
 ներով), որպէս զի չունենոր դասակարգը կա-
 ղողանար շուտափոյթ օգնութիւն ստանալ,
 որով անշուշտ զոհերի թիւը պակաս կը լինէր:
 Բուժման միջոցներից յիշելու է նոյնպէս
 սրտի կանոնաւոր գործունէութեան համար

ըծ ածուող դեղերը, որպէսզի հիւանդի
 սրտը հնարաւորութիւն ունենար տաքու-
 ան բարձր աստիճանին դիմանալ: Նման
 դեղեր կարող է նշանակել բժիշկը հիւանդի
 սրտը քննութեան ենթարկելուց: Ես կը յիշեմ
 ներկայիս միայն վալէրիանի կաթիլները, որը
 օրական մի քանի անգամ կարելի է տալ:

Թոքերի բորբոքման ժամանակ չպէտք է
 անտես առնել տաքացնող կոմպրէսներ և այս-
 պէս կոչուած բանկաները, որոնք մեծապէս
 նարաստում են:


Պէտք է ասել, որ բժշկուածները ապա-
 հովուած չեն կրկին հիւանդանալուց. մենք գի-
 տենք շատ գէպքեր, երբ սիպտիմբերին հի-
 ւանդացածները հոկտեմբերին կրկին հի-
 ւանդացան. մի քանի դեպքերում պատահել
 ենք 4 շաբթից յետոյ հիւանդութեան անդրա-
 դարձման: Այս բոլորը ի նկատի առնելով
 աւողջացածները պէտք է շատ զգոյշ լինին և
 աշխատեն ըստ հնարաւորութեան շուտ կազ-
 դուրուել, որ եթէ կրկին հիւանդանալու լի-
 նին կարողանան ցաւին դիմանալ:

Սրբեմն հիւանդի տաքութիւնն իջնելուց
 մի քանի օր յետոյ դարձեալ երևան են գա-
 լիս ինֆլուէնցայի ախտանիշներ և հիւանդին
 կրկին անկողին քցում: Այսպիսի դէպքերն
 առանձնապէս նկատելի են այն ժամանակ, երբ
 հիւանդը դեռ բոլորովին չբժշկուած, թողնում
 է անկողինը և մրսեցնում իրեն:

ԴՕՐՏՈՐ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՆԻ ԱՆԻԱՏՈՒԹՒԷՆ
ՆԵՐՔ

1. Triphenylmonomethylarsoniumjodid u
seine pharmak. Wirkung. (սպառ.)
2. Սիֆ. և Հաթա-էրլիխեան «606»-ը (սպառ.) — 15
3. Сохранение здоровья (распр.)
4. Волосы — 10
5. Բազմաձևութիւն, արուեստ.
ամբլութիւն և հակաբերքնա-
տրական միջ. Բ. տպ. — 25 Կ.
6. Անդրագարձ տիֆ — 20 Կ.
7. Բժաշոր և որովայնային տիֆ — 30 Կ.
8. Малокровіе и его лечение — 25 Կ.
9. Гигіена женщины вып. I. 1 ր. —
10. Легоч. заболѣв. I книжка — 25 Կ.
11. Ի՞նչ է վարակիչ հիւանդութ. — 15 Կ.
12. Վեներական ակտեր 1 ր. —
13. Առողջապահութ. դասընթաց 2 ր. 50 Կ.
14. Медицинская терминологія (ճա-
մուրի տակ է)
15. Համաճարակային ինֆուէնցա

Պահուար հեղինակի կողմից:
Եբուտովսկայալ, Կլ. № 56



40 204

« Ազգային գրադարան



NL0267760

6-942